

**„ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ“ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԲԱԺՆԻ  
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1.1 „Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,, հիմնադրամի (այսուհետ՝ ինստիտուտ) մագիստրատուրայի բաժինը ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է (այսուհետ՝ բաժին), որը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, ինստիտուտի կանոնադրությամբ և սույն կանոնադրության հիման վրա:

1.2 Մագիստրատուրան բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի երկրորդ կրթական աստիճանի և բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման ձևն է: Մագիստրատուրայում կարող է սովորել բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի աստիճան ունեցող անձը մասնագիտական գիտելիքները խորացնելու և կատարելագործելու, վերավորակավորելու, ինքնուրույն գիտական ուսումնասիրություններ կատարելու, գործնական, նորարական, տեխնոլոգիական զարգացումներն ընկալելու, ունակություններ ձեռք բերելու և մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար:

1.3 Բաժինն ունի դրոշմակնիք և կարող է ունենալ ձևաթուղթ (բլանկ):

1.4 Բաժինն իր իրավասությունների սահմաններում ունի ընդունելու ինքնուրույն որոշումներ, եթե դրանք չեն հակասում ՀՀ սահմանադրությանը, ինստիտուտի և սույն կանոնադրություններին:

**2. ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

2.1. Մագիստրատուրայի բաժինը ուսումնական, գիտական և վարչական ստորաբաժանում է, որն իրականացնում է բարձրագույն մասնագիտական և շարունակական կրթություն՝ մեկ կամ մի քանի մասնագիտություններով:

2.2. Մագիստրատուրայի բաժնի խնդիրներն են՝

- 1) Պլանավորել, կազմակերպել և վերահսկել մագիստրատուրայում ուսուցման գործընթացը:
- 2) Համակարգել և վերահսկել մագիստրատուրայի ներքին որակի ապահովման առնչվող գործառույթները:
- 3) Համակարգել մագիստրատուրայի ուսումնական գործընթացին մասնակցող ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը:
- 4) Բաժնի գործառույթներն են՝
- 5) Կազմակերպել մագիստրատուրայի ընդունելությունը:
- 6) Կազմակերպել մագիստրատուրայի ողջ գործընթացը, կատարել ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի վերահսկումը:
- 7) Օպտիմալացնել ուսումնական գործընթացի ժամանակացույցը:
- 8) Վերահսկել դասերի անցկացումը:
- 9) Կորրեկցիանցնել մագիստրոսական ծրագրերի ղեկավարների աշխատանքները:
- 10) Վերահսկել ուսումնական, գիտամանկավարժական, գիտահետազոտական պրակտիկաները:
- 11) Կազմակերպել մագիստրատուրայի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներ:
- 12) Կազմակերպել ավարտական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների աշխատանքները:
- 13) Նախապատրաստել մագիստրատուրայի ընդհանուր և ուսումնական գործընթացի ընթացիկ ու տարեկան հաշվետվությունները:
- 14) Կազմակերպել ուսումնական պլանների, ուսանողների հաճախումների, ուսման առաջադիմության տվյալների մուտքագրման ու մշակման, ստուգարքային և քննական տեղեկագրերի ու դիպլոմի հավելվածի էլեկտրոնային համակարգով պատրաստման գործընթացները:

#### 4. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎՈՐԻՄԸ

4.1. Մագիստրատուրայի բաժինն անմիջականորեն ենթարկվում է ինստիտուտի ռեկտորին: Մագիստրատուրայի բաժնի հաստիքացուցակը հաստատում և դրա մեջ փոփոխություններ է կատարում ռեկտորը:

4.2. Մագիստրատուրայի բաժինը ղեկավարում է բաժնի վարիչը, որը կարող է ունենալ օգնական կամ օգնականներ: Մագիստրատուրայի բաժնի վարիչին աշխատանքի նշանակում և պաշտոնից ազատում է ռեկտորը

4.3. Մագիստրատուրայի բաժնի վարիչի գործառույթներն են՝

- 1) Իրականացնել մագիստրատուրայի գործունեության ընթացիկ և հեռանկարային պլանավորում, կորդինացնել և ղեկավարել մագիստրատուրայի ուսումնական գործընթացին մասնակցող պրոֆեսորադասախոսական անձնակազմի գործունեությունը՝ կապված ուսումնական գործընթացի, ուսումնական պլանների, ծրագրերի կատարման, ուսումնամեթոդական փաստաթղթերի մշակման ուղղությամբ:
- 2) Ապահովել պայմաններ մանկավարժական անձնակազմին նորարարական տեխնոլոգիաների, ծրագրերի մշակման և լրամշակման գործընթացի համար:
- 3) Հսկել ուսումնական գործընթացի որակը, ուսանողների ուսումնական բեռնվածությունը՝ գնահատելով ուսանողների ուսումնական և արտաուսումնական արդյունքները՝ համապատասխան պետական կրթական չափորոշիչներին:
- 4) Ապահովել թեզի (ամփոփիչ ավարտական քննության) նախապաշտպանության և պաշտպանության գործընթացը:
- 5) Մասնակել ուսումնական պլանների, կրթական ծրագրերի, չափորոշիչների և այլ ուսումնական փաստաթղթերի կազմանը և մշակմանը:
- 6) Վերահսկել մագիստրատուրայի ուսումնական գործընթացի կազմակերպմանը վերաբերվող ինստիտուտի ռեկտորի հրամանների և այլ նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարումը:
- 7) Գիտական խորհրդի, ռեկտորատի նիստերին՝ ըստ ժամանակացույցի, հաշվետվություն ներկայացնել մագիստրատուրայի բաժնի գործունեության

վերաբերյալ, միաժամանակ կատարելով առաջարկություններ կրթական գործընթացի բարելավման ուղղությամբ:

- 8) Մասնակցել մագիստրանտների պրակտիկաների կազմակերպմանը, անցկացմանը և հսկման ընթացքին:
- 9) Համագործակցել ինստիտուտի ստորաբաժանումների ղեկավարների հետ, ստանալ համապատասխան տեղեկատվություն և փաստաթղթեր իր պարտականությունների կատարման համար, ստորագրել և հրապարակել փաստաթղթեր իր իրավասությունների շրջանակում:

## **6. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ**

6.1. Ինստիտուտի տվյալ տարվա մասնագիտությունների ընդունելության ցանկը, ըստ մասնագիտությունների կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ, մինչև տվյալ տարվա ապրիլի 1-ը, հաստատում է ՀՀ կառավարությունը:

6.2. Ինստիտուտի կողմից զանգվածային լրատվության միջոցներով տրվում է հայտարարություն՝ ընդունելության մասնագիտությունների, տեղերի և կանոնների վերաբերյալ:

6.3. Մագիստրատուրայի ընդունելության անցկացման համար ռեկտորի հրամանով և նախագահությամբ, ստեղծվում է ընդունող հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են ինստիտուտի ուսումնագիտական գծով պրոռեկտորը, ֆակուլտետների ղեկանները, մագիստրատուրայի բաժնի վարիչը:

6.4. Ընդունող հանձնաժողովը, հաշվի առնելով ֆակուլտետի կարծիքը՝ ուսումնասիրում և քննարկում է վերջինիս կողմից ներկայացրած մրցույթի հավակնորդների ցուցակները և ըստ մասնագիտությունների, բազայի կրթության ընթացքում ուսումնասիրված դասընթացների ցանկի հաշվառմամբ, իրականացնում է մրցույթ:

6.5. Ինստիտուտի ռեկտորը ընդունող հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա հրամանագրում է մրցութային հիմունքներով մագիստրատուրա ընդունված դիմորդներին:

6.6. Մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել բակալավրի, դիպլոմավորված մասնագետի և մագիստրոսի որակավորում ունեցող ՀՀ

քաղաքացիները: Մագիստրոսի աստիճան ունեցող քաղաքացիները 2-րդ մագիստրոսական կրթություն կարող են ստանալ միայն վճարովի հիմունքներով: Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք մագիստրատուրա կարող են ընդունվել միջպետական և միջգերատեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի հիման վրա, լրացուցիչ տեղերի հաշվին, ինչպես նաև վճարովի հիմունքներով սեփական նախաձեռնությամբ:

6.7. Մագիստրատուրա ընդունվելու համար դիմումը տրվում է ռեկտորի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը.

- 1) բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի դիպլոմի և դրա հավելվածի (միջուկ) պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),
- 2) ինքնակենսագրություն և 4 լուսանկար (3X4 չափի),
- 3) հրատարակված կամ հրատարակման ընդունված գիտական աշխատությունները, տվյալներ ուսանողական գիտաժողովներում ելույթների վերաբերյալ,
- 4) մարզական կարգը կամ կոչումը, միջազգային մրցումների մասնակցելու արդյունքները և այլն,
- 5) ընդունելության ծառայությունների համար սահմանված 1.000 դրամի վճարի անդորագիրը:

6.8. Մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է 2 փուլով:

1-ին փուլով մագիստրատուրայի ընդունելությունն ըստ մասնագիտությունների անցկացվում է ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված պետության կողմից ուսանողական նպատակների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման և առանց տարկետման իրավունքով ուսուցման տեղերի:

1-ին փուլով մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է ընթացիկ տարվա հունիսի 5-ից մինչև հունիսի 10-ը, որին կարող են մասնակցել միայն բակալավրիատի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող ընթացիկ տարվա շրջանավարտները:

2-րդ փուլով մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է մինչև ընթացիկ տարվա օգոստոսի 29-ը, ըստ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի), առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարեկետման իրավունքի ուսուցման տեղերի:

6.9. Բանակի տարկետման իրավունքով տեղերի բաշխումը ըստ մասնագիտությունների կատարում է ընդունող հանձնաժողովը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված բանակի տարկետման իրավունքով տեղերի շրջանակներում՝ տվյալ մասնագիտության բակալավրիատի արական սեռի շրջանավարտների թվին համապատասխան:

6.10. Մագիստրատուրայի ընդունելության մրցույթն անցկացվում է հետևյալ չափանիշների առաջնահերթությամբ.

- 1) դիպլոմի հավելվածում (միջուկում) գրանցված միջին որակական գնահատականը (ՄՈԳ) և ընդունող հանձնաժողովի հարցազրույցով կայացած որոշումը, իսկ միավորների հավասարության դեպքում՝
- 2) գերազանց դիպլոմի առկայությունը,
- 3) ավարտական աշխատանքի և ամփոփիչ ատեստավորման ՄՈԳ-ը,
- 4) մարզական կարգը և կոչումը, միջազգային մրցումների արդյունքները,
- 5) տպագրված գիտական աշխատանքների առկայությունը:

6.11. ԲՈՒՀ-ը մրցույթով անցած մագիստրանտների հետ կնքում է պայմանագիր, որի տեքստը հրապարակվում է ընդունելության հայտարարության հետ և նախապես տրամադրվում դիմորդներին:

## **7. ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅՈՒՄ**

7.1. Բոլոր մասնագիտություններով ուսումնառությունը մագիստրատուրայում մեկ տարի է: Մագիստրոսները ինստիտուտի աշխատողների հետ հավասարապես օգտվում են գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից համակարգչային տեխնիկայից, գրադարաններից, մարզաբազաներից և այլ հնարավորություններից:

7.2. Մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձանց տրվում է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի

և սպորտի պետական ինստիտուտի ավարտական փաստաթուղթ՝ համապատասխան ներդիրով մագիստրոսի դիպլոմ:

### **8. ԲԱԺՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ**

8.1 Բաժինը վերակազմակերպվում կամ լուծարվում է ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

### **9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

9.1 Սույն կանոնադրությունը ընդունվում, նրանում լրացումներ կամ փոփոխություններ կատարվում են ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Ուժը կորցրած ճանաչել „Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ, պետական ոչ առևտրային կազմակերպության, գիտական խորհրդում 31.01.2012թվականին հաստատված “Մագիստրատուրայի բաժնի կանոնադրությունը”:

